յայտնի երեւի 'ի բովանդակութենէ արձանագրութեանս․ զի յառաջագոյն բազում անգամ վէճս և խռովութիւնս յարուցեալ են 'ի մէջի իւրեանց վասն եկեղեցւոյն, Այրին Ծննդեան և գերեզմանի Ս․ Աստուածածնի․ և Օսմանեան Տէրութիւնն 'ի Թուին ١٢٢٨ առաքեալ է Դատաւորս եւ Ոստիկանս յԵրուսաղէմ և հրովարտակաւ բաժանորդ արարեալ զերկուս տեղիս՝ երկաքանչիւրոց տուեալ Հէօճճէթս։ Եւ 'ի նոյն Թուականէ մինչեւ ١٢٥٢ Թիւն, զոր ինչ ունէր ոք՝ այնու շատացեալ է, և առանց հակառակելոյ միակերպ ընթացեալ են։ Սակայն յեկեղեցին Բեթղեհէմի և յԱյրին եկեղեցական սպասք և զարդարանք Յունաց առաւել են քան զՀայոցն․ եւ 'ի բաժանորդութեան Հէօճճէթս ոչ են գրեալ յայնժամ բացորոշ եկեղեցական սպասս իւրաքանչիւր ազգաց․ և մի միայն 'ի բաժանորդ բառէ բաղկացեալ։ կամեցեալ Հայոց հաւասար բաժանորդ լինել Յունաց, 'ի Թուին ١٢٥٢ 'ի ձեռն Դատաւորին առաջի Քաղաքապետին և գլխաւորաց այլազգեաց քաղաքին կախեալ են ըղպատկերս և զկանթեղս, զորս գրեցաք 'ի վեր անդր։

Յայնժամ Յոյնք ոչ են տուեալ հաճութիւն, եւ Հայք ոչ են շատացեալ, թէ տակաւին ոչ եղեւ կատարեալ բաժանորդութիւն․ և 'ի լինիլ գժտութեանս այսմիկ՝ Փոխանորդք երկուց ազգաց եւ ժողովականք թողեալ զգործն 'ի վիճակի իւրում մեկնեալ են անտի, և վասն այսր ոչ են տուեալ Հայոց Հէօճճէթ 'ի դատարանէ։ Եւ թէպէտ յետոյ կամեցեալ է Դատաւորն եղծանել զկիսն զոր արար, այլ դադարեալ 'ի պաշտօնէ իւրմէ՝ մեկնեալ է անտի։ Եւ 'ի քննութենէս յայսմանէ յայտնի եղեւ թէ գործն մնացեալ է այնպէս 'ի վիճակի իւրում․ և ոչ են հակառակեալ Հայք հրովարտակին Յունաց, որ զկնի պատահմանցս ելեալ է։ Նոյնպէս և գործն լեալ է 'ի ժամանակս Օմար Նասիպ Դատաւորին, և ոչ ամբաստանեալ Համտուլլահ Դատաւորին, որ 'ի ժամանակի քննութեանս լրացեալ պայմանեալ ժամանակ նորին և մեկնեցաւ անտի։ Այս է նկարագրութիւն դատին եկեղեցւոյն Բեթղեհէմի։

Նիստ Երրորդ։

ՀաՓըզ Բաշիտ Էֆէնտի։ Վերջացաւ քննութիւն դա-